

## Որակի հռչակագիր Ժողովրդագրական վիճակագրություն

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ժողովրդագրական վիճակագրություն
0.2	Ոլորտը	Բնակչություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Մարդահամարի և ժողովրդագրության բաժին Բաժնի պետ Կարինե Կույումջյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 524 528 Էլ. փոստ՝ <a href="mailto:demography@armstat.am">demography@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է եռամսյակային և տարեկան պարբերականությամբ տեղեկատվություն տրամադրել ժողովրդագրական իրավիճակի, այն է՝ ծնունդների, մահվան դեպքերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների դեպքերի վերաբերյալ ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման միավորների, ինչպես նաև ծնունդներն ըստ մոր և հոր հիմնական ժողովրդագրական բնութագրիչների, մահացության դեպքերի վերաբերյալ տվյալների բաշխումն ըստ սեռի, տարիքի, մահվան պատճառների, ամուսնացողների և ամուսնալուծվողների տարիքային և այլ բնութագրիչների վերաբերյալ: Ցուցանիշների հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի սկզբներից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Ծնունդների, մահերի, ամուսնությունների և ամուսնալուծությունների մասին տեղեկատվությունը կիրառվում է երկրի սոցիալ-ժողովրդագրական և ազգային անվտանգության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշների ձևավորման հիմքը ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ռեգիստրից՝ ծննդյան, մահվան, ամուսնության և ամուսնալուծության

		<p>վերաբերյալ ակտային գրանցումներից տվյալների նախանշված ձևաչափով ամսական պարբերականությամբ ձևավորվող և էլեկտրոնային եղանակով Արմստատ-ին հասանելի վիճակագրական հաշվետվություններն են:</p> <p>Մահվան պատճառների մասին տվյալների աղբյուրը մահվան բժշկական վկայագրում մահացության պատճառների մասին բժշկի կողմից արձանագրված թվային ծածկագրերն են, իսկ դրանց բացակայության դեպքում՝ համապատասխան գրառումները:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ և ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	Տես՝ կետ 1.2
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><b>Կենդանաձևություն</b> է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումն անկախ հղիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ ցուցաբերում է կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են. սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և կամ անջատված է ընկերքը: Այդպիսի ծննդի յուրաքանչյուր արգասիք համարվում է կենդանածին: ՔԿԱԳ տարածքային մարմիններում գրանցման են ենթակա 500գ և ավելի քաշով կենդանաձևության բոլոր դեպքերը:</p> <p><b>Մեռելաձևություն</b> է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումը, որից հետո պտուղը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի այլ նշան՝ ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները: ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի մարմիններում գրանցվում և պերինատալ մահացության ցուցանիշում ներառվում են 500գ և ավելի քաշով (22 շաբաթ և ավելի հղիության ժամկետով) մեռելաձևության դեպքերը:</p> <p><b>Շուրջծնական (պերինատալ) մահացությունը</b> հավաքական հասկացություն է, որն ամփոփում է կենսունակ պտղի մահացությունը պերինատալ շրջանում՝ սկսած հղիության 22 շաբաթից մինչև մոր ծննդաբերության ընթացքը, ինչպես նաև</p>

		<p>ծննդաբերության ժամանակ ու մանկան կյանքի մինչև 168 ժամը (0-6 օրական) տեղի ունեցած մահացությունը: <b>Պերինատալ շրջանը</b> սկսվում է պտղի ներարգանդային կյանքի 22 լրացած շաբաթից (154 օրից), երբ ծննդյան քաշը նորմայում 500 գրամ է և ավարտվում է ծննդից 7 լրիվ օր (168 ժամ) հետո:</p> <p><b>Պտղի մահ</b> է համարվում բեղմնավորման արգասիքի մահը մինչև մոր օրգանիզմից նրա լրիվ արտամղումը կամ դուրսբերումը, անկախ հղիության ժամկետից: Մահվան մասին են վկայում մոր օրգանիզմից պտղի անջատումից հետո շնչառության կամ կյանքի որևէ այլ նշանի (ինչպիսիք են սրտխփոցը, պորտալարի անթագարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները) բացակայությունը:</p> <p><b>Մանկական մահացության ցուցանիշը</b> բնութագրում է մինչև 1 տարեկան երեխաների մահացությունը:</p> <p><b>Երեխաների մահացության</b> ցուցանիշը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում 0-4 տարեկան հասակի երեխաների մահացությունը:</p> <p>Մինչև 2003թ. մահվան ակտերի մշակումն ըստ մահվան պատճառների իրականացվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված Հիվանդությունների միջազգային դասակարգչի՝ IX-րդ վերանայման, իսկ 2004թ.՝ X-րդ վերանայման համաձայն: Դրանով պայմանավորված, հիվանդությունների որոշ խմբերի համար ցուցանիշների համադրելիությունը հնարավոր չէր պահպանել:</p> <p><b>Մայրական մահացությունը</b> բնորոշվում է որպես հղիությամբ պայմանավորված կնոջ մահ, անկախ հղիության տևողությունից, որը վրա է հասել հղիության ընթացքում կամ նրա ավարտից հետո 42 օրերի ընթացքում, հղիության հետ կապված որևէ պատճառից, բարդացած վերջինիս առկայությամբ կամ վարման գործընթացով, բացառությամբ դժբախտ պատահարի կամ հանկարծակի առաջացած պատճառի:</p>
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Եռամսյակային ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 35-րդ օրը, տարեկան ցուցանիշները՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա 2-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Եռամսյակային, տարեկան
<b>3. Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:

		Վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր առկա չէ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարվա տվյալ ժամանակաշրջանի համար արձանագրված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
<b>4 .Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Ժամանակագրական համադրելիության համատեքստում առկա է Ժողովրդագրական տվյալների վերաբերյալ ժամանակագրական շարք 1940թ.:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ իրականացվում է տասնամյակը մեկ անցկացվող մարդահամարի տվյալների և տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Համապատասխան հրապարակումներում տվյալները նշվում են որպես օպերատիվ (նախնական), ճշգրտված կամ վերջնական: Փոփոխված տվյալներն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<p><b>Հրապարակումներ</b></p> <p><b>Եռամսյակային հրապարակումներ</b></p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում (հայերեն և ռուսերեն)՝ եռամսյակային հրապարակումներում:</p> <p>«Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը» վիճակագրական տեղեկագիր (հայերեն):</p> <p><b>Տարեկան հրապարակումներ</b></p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական - վերլուծական զեկույց (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական գրքույկ (հայերեն և անգլերեն):</p>

		<p><b>Տվյալների բազա</b>  <a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p> <p><b>Ժողովրդագրական տվյալների բազա</b>  <a href="https://www.armstat.am/am/?nid=209">https://www.armstat.am/am/?nid=209</a></p> <p><b>Բնտերնետային հասցե</b>          Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով.  <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82</a>.</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Հավաքվող վիճակագրական տվյալները պահպանվում են էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային շտեմարաններով:
5.3	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=673">https://www.armstat.am/am/?nid=673</a> :
5.4	Այլ տեղեկատվություն	Մեթոդաբանական պարզաբանումներն առկա են համապատասխան թեմատիկ հրապարակումներում:
<b>6. Լրացուցիչ փաստաթղթավորում</b>		
6.1		Ծնունդների և մահերի վիճակագրության «Տեխնիկական բնութագիր» փաստաթղթեր: